ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ»

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Ֆինանսների տնօրինման» ընթացակարգ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ»

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Ֆինանսների տնօրինման» ընթացակարգ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 2018թ. հունվարի 8-ի N 4 նիստում
ՀՀ ԿԳՆ ԱՊՔ-ի մանկավարժական խորհրդի

նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ (այսուհետ՝ ԱՊՔ) ֆինանսների տնօրինման ընթացակարգը նախատեսում է ֆինանսական ռեսուրսների օգտագործումը քոլեջի ռազմավարությամբ սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար՝ ֆինանսական քաղաքականության իրականացման մեթոդաբանական և գործիքային հենքի ապահովմամբ:

ԱՊՔ ֆինանսական քաղաքականության արդյունավետ իրականացումը հնարավոր է բոլոր ֆինանսական հոսքերի, գործընթացների հստակ պլանավորման դեպքում: Ֆինանսական պլանավորումը բոլոր ֆինանսական ռեսուրսների ծավալների հավասարակշռության և դրանց բաշխման գործընթաց է: Պլանավորման ելակետային փուլ է համարվում քոլեջի ֆինանսական գործունեության հիմնական ուղղությունների կանխատեսումը, որի համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- հիմնավորված ծախսերի հաշվառման համակարգի առկայություն,
- մշակված հաշվապահական հաշվառման համակարգի առկայություն,
- իրավասությունների և պարտականությունների հստակ բաշխումը ըստ կառավարման մակարդակների, ստորաբաժանումների և այլ պատասխանատուների:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն փաստաթուղթը սահմանում է ԱՊՔ-ում ֆինանսների տնօրինման ընթացակարգը:

1.2 Փաստաթղթի նպատակն է ԱՊՔ կայուն ֆինանսական համակարգի ստեղծման հիմքերի մշակումը:

1.3 Փաստաթուղթն ընդունվում է փոփոխվում է ԱՊՔ Կոլեգիալ կառավարման խորհրդի կողմից:

1.4 Փաստաթուղթն ընկած է ԱՊՔ ֆինանսների տնօրինման գործողությունների հիմքում:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Ռազմավարական նպատակ

ԱՊՔ ֆինանսական գործունեության ռազմավարական նպատակն է քոլեջի ֆինանսավորման համակարգի բարեփոխումը, կրթական, գիտական, խորհրդատվական, տնտեսական ու սոցիալական ոլորտներում կայուն ֆինանսական վիճակի հաստատումը:

2.2 Քաղաքականության նպատակ

ԱՊՔ ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգի կառուցումը, ուղղված քոլեջի գործունեության ռազմավարական նպատակների իրականացմանը:

2.3 Ընթացակարգի նպատակ

Ընթացակարգի նպատակն է քոլեջի զարգացման ֆինանսական ապահովման կայուն համակարգի ստեղծումը:

2.4 Ռազմավարական խնդիրներ

- ԱՊՔ ֆինանսական պլանավորման համակարգի մշակում, ֆինանսական գործունեության քաղաքականության և ընթացակարգերի մշակում ու հաստատում,
- ԱՊՔ անշարժ և շարժական գույքի, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների տվյալների բազայի ստեղծում և դրանց շահագործման մոնիթորինգի ու վերահսկողության համակարգի ներդրում,
- ԱՊՔ գործունեության ֆինանսատնտեսական վիճակի և հնարավոր ռիսկերի վերլուծություն,
- ԱՊՔ գործունեության տարբեր ուղղություններով ֆինանսավորման աղբյուրների և արտաբյուջետային միջոցների ծավալների ընդլայնում, կրթական ոլորտի օպտիմալացման, խորհրդատվական, տեղեկատվական և կրթական վճարովի դասընթացների միջոցով՝ քոլեջի ֆինանսական մուտքերի ապահովման համակարգի

ձևավորում,

- Արտաբյուջետային միջոցների ձևավորման և ծախսումների գործընթացներում ԱՊՔ կառուցվածքային ստորաբաժանումների ակտիվության և պատասխանատվության բարձրացում,
- ԱՊՔ ներքին աուդիտի ծառայության դերի բարձրացում:

2.4 Քաղաքականության հիմնական խնդիրներնեն՝

- ԱՊՔ ֆինանսատնտեսական վիճակի վերլուծությունը,
- ԱՊՔ ֆինանսական գործունեության ապահովման քաղաքականության մշակումը,
- ԱՊՔ շրջանառու միջոցների կառավարումը,
- ԱՊՔ կրեդիտորական և դեբիտորական պարտքերիկառավարումը,
- ԱՊՔ ծախսերի կառավարումը:

2.5 Ընթացակարգի հիմնական խնդիրներնեն՝

- ԱՊՔ ֆինանսավորման համակարգի կատարելագործումը և զարգացումը, ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում,
- ԱՊՔ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը,
- ներդրումների, այդ թվում դրամաշնորհային ծրագրերի ներգրավումը՝ Քոլեջի նյութական, ֆինանսական և մարդկային ներուժի զարգացման համար,
- ֆինանսական ռեսուրսների և միջոցների արդյունավետ օգտագործման ապահովում,
- ֆինանսների բաշխման համակարգի զարգացում:

3. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԱՊՔ ֆինանսների կառավարումը և բաշխումն ուղղված է քոլեջի ֆինանսների ռազմավարական նպատակների իրականացմանը:

Սույն քաղաքականությունը որոշում է քոլեջի ֆինանսների կառավարման սկզբունքները՝

- *Համապատասխանություն (*քոլեջի ռազմավարական նպատակներին),
- *Ամբողջականություն* (ապահովել գործողությունների իրականացման տրամաբանական շարունակություն),
- *Հստակություն* (իրականացման ժամանակահատված, կատարողներ, վերահսկման համակարգ),
- *Ճկունություն* (բարելավման գործողությունների իրականացման մեխանիզմների ներդրման հնարավորություն),
- Պլանի մշակման փուլում կատարողների մասնակցությունը, իրավունքների, պարտականություններիևպատասխանատվություններիտարանջատումը:

Քոլեջի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ պետական

ֆինասավորումը, ուսանողների վարձավճարներ, կրթական վճարովի ծառայություններ, քոլեջի զարգացման դրամաշնորհային ծրագրեր:

ԱՊՔ ֆինանսական ռեսուրսներով ապահովումը ենթադրում է ֆինանսական միջոցների աղբյուրների կառավարում և ներառում է հետևյալ ֆունկցիաները՝

- Պահանջվող ֆինանսական ռեսուրսների ծավալների գնահատում:
- Ֆինանսական ռեսուրսների ստացման ժամկետների և դրանց օգտագործման ուղղությունների որոշում:

4. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՊՔ ֆինանսների տնօրինումն իրականացվում է որոշակի փուլերով՝

Պլանավորում- Ֆինանսական պլանավորումը ֆինանսական պլանների համակարգի մշակման գործընթաց է ֆինանսական գործունեության առանձին ասպեկտներով, որոնք ապահովում են ֆինանսական ռազմավարության իրականացումը:

ԱՊՔ ֆինանսական պլանավորման հիմքում ընկած է քոլեջի ռազմավարական նպատակները և խնդիրները: Ֆինանսական պլանավորումը ներառում է քոլեջի բոլոր եկամուտների և ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունների պլանավորումը՝ ԱՊՔ զարգացման ապահովման համար:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման ընթացակարգը ներառում է քոլեջի զարգացման հետևյալ հիմնական սկզբունքները՝

- Ֆինանսական գործընթացները պետք է իրականացնել ելնելով քոլեջի ռազմավարությունից,
- Բյուջետային գործընթացը պետք է լինի բաց,
- Ֆինանսների կառավարումը պետք է բաշխված լինի գործընթացի պատասխանատուների միջև:

  Ֆինանսական պլանավորման փուլում կազմվում են ֆինանսական գործունեության նախահաշիվ:

  Ֆինանսական պլանավորումը ուղղված է հետևյալ խնդիրների լուծման համար՝

  - եկամուտների ավելացման պահուստների և դրանց մոբիլիզացման եղանակների բացահայտում.
  - Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, քոլեջի զարգացման առավել ռացիոնալ ուղղությունների որոշում,
  - Ֆինանսական հոսքերի օպտիմալ կառավարում:

Ռեսուրսներով ապահովում-Քոլեջի ֆինանսական ռեսուրսների ապահովումն իրականացվում է ըստ հետևյալ քայլերի՝

- Նախնական բյուջեի պլանի կազմում պատասխանատու անձանց կողմից,
- Ռեսուրսների օգտագործման առաջնային ուղղությունների որոշում՝ քոլեջի մանկավարժական խորհրդի կողմից,
- Բյուջեի հաստատում և իրականացում,
- Իրականացման վերահսկում, թերությունների վերացում:

Քոլեջի բյուջեն կազմվում է տարեկան կտրվածքով, պլանավորվում և ներկայացվում է քոլեջի կառավարման խորհուրդ՝քննարկման և հաստատման համար:

Բյուջեի փաթեթը պատրաստվում է գլխավոր հաշվապահի կողմից և բաշխվում ըստ քոլեջի կողմից իրականացվող հիմնական ֆինանսական ապահովման գործառույթների:

Այս փուլի իրականացմամբ անհրաժեշտէ ապահովել՝

- ֆինանսական ռեսուրսների ծավալները,
- սեփական շրջանառու միջոցները,
- ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը:

Այս փուլում որոշվում են ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման մեթոդները և ժամկետները:

Ռեսուրսների բաշխում և կառավարում- Ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է նախապես կայացված որոշումների և քոլեջի ռազմավարական գերակա ուղղությունների հիման վրա:

Բաշխման պլանը պետք է ներառի ֆինանսական ռեսուրսները, իրականացման ռազմավարական ուղղությունը կամ գործողությունը, բյուջեի իրականացման ժամկետները:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- աշխատավարձ,
- ուսումնական գործընթաց /կրթական ծառայություններ,
- գիտություն
- պետական բյուջեի վճարումներ,
- ընթացիկ ծախսեր՝քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով:

ԱՊՔ ֆինանսատնտեսական վիճակի վերահսկում, վերլուծություն և գնահատում- ԱՊՔ-ում իրականացվում է ֆինանսատնտեսական վիճակի ներքին և արտաքին աուդիտներ:

Վերահսկման արդյունքների հիման վրա իրականացվում է ֆինանսատնտեսական ընթացիկ վիճակի վերլուծություն և գնահատում:

Ֆինանսական հաշվետվությունը պետք է պատրաստ լինի առնվազն հաշվետու տարվա ավարտին, և ապահովի հետևյալ դրույթները՝

- բյուջեի փաստացի ֆինանսական ցուցանիշների համեմատում,
- բոլոր եկամուտների և ծախսերի աղբյուրների ներառում,
- տարեվերջյան մնացորդների կանխատեսում:

Վերլուծությունը պետք է իրականացնել հետևյալ նպատակներին հասնելու համար՝ Փաստել՝

- ծախսերն արդյունավետ են և անհրաժեշտ նպատակներին հասնելու համար,
- ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ,
- առկա են բավարար ռեսուրսներ աշխատանքները շարունակելու համար,
- իրականացնել կրթական միջավայրի փոփոխություններիբացահայտում:

Վերլուծության և գնահատման արդյունքների հիման վրա կազմակերպվում և իրականացվում են ֆինանսական գործունեության բարելավմանն

ուղղված միջոցառումներ:

Պատասխանատվություն- Ֆինանսական համակարգի մշակման, ներդրման և կառավարման համար պատասխանատվություն են կրում քոլեջի հաշվապահությունը և այն կառուցվածային ստորաբաժանումները և անձինք, որոնք պատասխանատու են տվյալ գործընթացի կազմակերպման և իրականացման համար:

5. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

5.1 Ֆինանսների տնօրինման ընթացակարգը որոշում է ԱՊՔ ֆինանսական ապահովման գործընթացների բովանդակությունը և հաջորդականությունը: Սույն ընթացակարգը սահմանում է տվյալ գործընթացի շրջանակներում իրավասությունների և պատասխանատվությունների բաշխումը:

5.2 Սույն ընթացակարգի գործունեության ոլորտը տարածվում է քոլեջի հաշվապահության և այն կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք ներառվում են ֆինանսների կառավարման համակարգում:

5.3 Ֆինանսական կառավարման ռազմավարության տակ հասկացվում է ֆինանսական ռեսուրսների ներդրման գերակա ուղղությունների և արդյունավետ եղանակների սահմանումը՝ քոլեջի կրթության, գիտության, խորհրդատվության ոլորտներում դրված խնդիրների իրականացման համար:

5.4 Ֆինանսական կառավարման տակտիկան ներառում է շրջանառու ակտիվների և քոլեջի կարճաժամկետ պարտականությունների համալիր օպերատիվ կառավարումը, օպտիմալ որոշումների կայացումը ֆինանսական պլանավորման և կառավարման ոլորտում:

5.5 Քոլեջի ֆինանսական կառավարումը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղությունների շրջանակներում՝

- ԱՊՔ ֆինանսատնտեսական վիճակի վերլուծություն և գնահատում,
- ԱՊՔ ֆինանսական գործունեության պլանավորում և վերահսկում,
- ԱՊՔ ֆինանսական ռեսուրսներով ապահովում,
- ԱՊՔ ֆինանսական ռեսուրսների բաշխում նկառավարում:

ԱՊՔ ֆինանսատնտեսական վիճակի վերլուծությունը և գնահատումը ներառում է քոլեջի եկամուտների և ծախսերի (բյուջետային և արտաբյուջետային) ընդհանուր և հոդվածային վերլուծություն, քոլեջի սեփականության վիճակի և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության գնահատում, ֆինանսական միջոցների օգտագործման աղյունավետության բարձրացման պահուստների (ռեզերվների) բացահայտում:

Ֆինանսական գործունեության պլանավորման և վերահսկման շրջանակներում իրականացվում է ծախսերի պլանավորում քոլեջի գործունեության բոլոր ուղղություններով, բյուջետային աղբյուրների ծախսերի նախահաշվի պլանավորում ըստ հաշվապահական հոդվածների, արտաբյուջետային գործունեությամբ եկամուտների և ծախսերի նախահաշիվների կազմում:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսներով ապահովումը ենթադրում է Քոլեջի միջոցների աղբյուրների կառավարում և ներառում է հետևյալ ֆունկցիաները՝

- պահանջվող ֆինանսական ռեսուրսների ծավալների գնահատում,
- ֆինանսական ռեսուրսների ստացման ժամկետների և օգտագործման որոշում,
- ներդրումների նպատակահարմարության հետազոտում,
- ազատ ֆինանսական միջոցների տեղաբաշխմանը ուղղված որոշումների կայացում:

5.6. Ընթացակարգի նկարագրություն: Ռազմավարական ֆինանսական կառավարումը ներառում է քոլեջի ֆինանսական զարգացման ռազմավարական պլանի (ծրագրի) մշակումը և ներդրումը գործածության մեջ: Տվյալ փուլի համար որակի և արդյունավետության գնահատման ցուցանիշներն են՝

- ԱՊՔ ֆինանսական կառավարման բոլոր ասպեկտների ընդգրկման աստիճանը,
- ԱՊՔ ֆինանսական ինքնուրույնության մակարդակի կանխատեսման ցուցանիշների առկայությունը,
- ԱՊՔ-ում ընթացող գործընթացների ֆինանսական ապահովման կայունության կանխատեսման ցուցանիշների առկայությունը,
- Ֆինանսավորման աղբյուրների քանակը և բազմազանությունը:

Ֆինանսական պլանավորում. տվյալ փուլում օգտագործվող փաստաթղթային հենք է ֆինանսական պլանները (քոլեջի բյուջեն), բյուջետային և արտաբյուջետային գործունեության ծախսերի նախահաշիվները:

Ֆինանսական պլանավորման փուլում որակի և արդյունավետության գնահատման ցուցանիշներն են՝

- ԱՊՔ բյուջետային և արտաբյուջետային գործունեության ֆինանսական միջոցներով ապահովվածության մակարդակը,
- ԱՊՔ բյուջեի եկամուտների և ծախսերի հավասարակշռությունը,
- Դրամական մուտքերի և վճարումների համապատասխանեցման աստիճանը:

Ֆինանսական ռեսուրսներով ապահովում: Տվյալ փուլում օգտագործվող փաստագրությունը՝

- Ֆինանսավորման պլան (ընթացիկ)՝ պահանջվող ֆինանսական ռեսուրսների ծավալների գնահատումով, ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման մեթոդների և ժամկետների սահմանումով, ծախսերի և ռիսկերի գնահատումով՝ կապված միջոցների ներքին աղբյուրների ներգրավումով:

Որակի և արդյունավետության գնահատման ցուցանիշներն են՝

- անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներիծավալները,
- սեփական շրջանառու միջոցներով ապահովվածությունը,
- ֆինանսական աղբյուրների կառուցվածքի օպտիմալությունը,
- ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման մեթոդների և ժամկետների որոշումը:

Ֆինանսական ռեսուրսների բաշխում: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը սկսվում է

ռազմավարական պլանավորումից,երբ քոլեջը որոշում է իր տեսլականը և զարգացման նպատակները:

Քոլեջի նպատակները սահմանելուց հետո անհրաժեշտ է առանձնացնել համապատասխան ռեսուրսներ՝ դրանք իրականացնելու համար:

Անհրաժեշտ փաստագրությունը՝

- Ֆինանսական ռեսուրսների բաշխման փաստաթղթեր՝ ներառյալ ներդրումային բնույթի երկարաժամկետ և կարճաժամկետ որոշումների ծրագիրը:

Որակի և արդյունավետության գնահատման ցուցանիշներն են՝

- ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման համաչափությունը,
- եկամուտների բաշխման օպտիմալությունը՝զարգացման և սպառման նպատակների վրա,
- երկաժամկետ և կարճաժամկետ ներդրումների համադրումը,
- ԱՊՔ-ում ներդրումային գործունեության կառավարման մակարդակը:

ԱՊՔ ֆինանսատնտեսական վիճակի և արդյունավետության վերահսկում, վերլուծություն և գնահատում: Քոլեջի ֆինանսական գործունեության վերահսկումը իրականացվում է ներքին և արտաքին աուդիտների միջոցով: Աուդիտների արդյունքը արտացոլող հիմնական փաստաթղթերն են քոլեջի հաշվապահական և ֆինանսական գործունեության վիճակի ստուգման ակտերը եզրակացությունները:

Տվյալ փուլի իրականացման որակի և արդյունավետության գնահատման ցուցանիշներն են՝

- ԱՊՔ հաշվապահական,ֆինանսական և օպերատիվ հաշվառման ընդհանուր մակարդակը,
- ԱՊՔ գույքային վիճակի ընդհանուր վերլուծության առկայությունը,
- ֆինանսատնտեսական ինֆորմացիայի հավաքման համակարգի կատարելագործման և տնտեսագիտական չափանիշների կիրառման աստիճանը ֆինանսական պլանավորման և կառավարման ընթացակարգերում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ֆինանսական կառավարման գործընթացում օգտագործման մակարդակը,
- ԱՊՔ բյուջետային և արտաբյուջետային գործունեության ֆինանսական միջոցներով ապահովվածությունը:

Ընթացակարգի պահանջները տարածվում են քոլեջի հաշվապահության և այլ կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք ներառված են որակի կառավարման համակարգում, և կապված են ֆինանսական ռեսուրսների կառավարման հետ: